ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-91	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳԽՏ 1993/24	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Գերագույն խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	30.12.1993
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	30.12.1993
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.04.1994	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի
կողմից «13» դեկտեմբերի 1993 թ. Հ.Ն-0966-I

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է սպառողական կոոպերացիայի կազմակերպական-իրավական հիմունքները, սպառողական ընկերությունների և դրանց միությունների ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները, ինչպես նաև պետական մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները:

Հոդված 1. Սպառողական կոոպերացիա

1. Հայաստանի Հանրապետությունում սպառողական կոոպերացիան փայատերերի կամավոր միավորում է՝ իր անդամների կարիքները ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով:
2. Սպառողական կոոպերացիան, որպես միավորում, շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում, որի եկամուտներն օգտագործվում են միայն իր կանոնադրական նպատակների իրականացման համար:
3. Սպառողական կոոպերացիայի կազմակերպական ձևերն են՝ սպառողական ընկերություններն ու սպառողական ընկերությունների միությունները:
4. Սպառողական ընկերությունների, դրանց միությունների գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերով, ինչպես նաև սպառողական ընկերությունների և դրանց միությունների կանոնադրություններով:
5. Սպառողական ընկերություններն ու դրանց միություններն իրենց կանոնադրական նպատակներից ելնելով կարող են իրականացնել առևտրական, արտադրական, մթերման, արտաքին տնտեսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձեռնարկատիրական այլ գործունեություն:

Հոդված 2. Սպառողական ընկերություն

1. Սպառողական ընկերությունը 30-ից ոչ պակաս անդամների (այսուհետ՝ փայատերեր) կամավոր միավորում է, որը կազմավորվում է նրանց դրամական կամ այլ նյութական ներդրումների (այսուհետ՝ փայավճար) հիման վրա և հանդիսանում է իրավաբանական անձ:

2. Սպառողական ընկերության փայատերեր կարող են լինել 16 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք: Անդամությունը սպառողական ընկերությունում պայմանավորված չէ նրա գործունեությունում աշխատանքային մասնակցությամբ:

3. Փայատերն իրավունք ունի ազատ դուրս գալու սպառողական ընկերությունից՝ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ դրամական կամ այլ նյութական արտահայտությամբ ստանալու ընկերության գույքի իր բաժինը:

4. Սպառողական ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր անդամի ստանձնած պարտավորությունների համար, իսկ վերջինս պատասխանատվություն է կրում ընկերության պարտավորությունների համար միայն իր փայավճարի սահմաններում:

5. Սպառողական ընկերության կառավարման բարձրագույն մարմինը՝ փայատերերի կամ նրանց կողմից լիազորված անձանց (այսուհետ լիազորներ) ընդհանուր ժողովն է, որը հաստատում է ընկերության կանոնադրությունը, որոշում փայավճարի չափը, ընտրում սպառողական ընկերության ղեկավար և վերահսկիչ մարմիններ, լսում նրանց հաշվետվությունները, սահմանում այդ մարմինների պահպանման ծախսերը, որոշում սպառողական ընկերությունների միության և այլ միությունների կազմի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու, միություններին որոշակի իրավունքներով և ֆունկցիաներով օժտելու, դուստր ձեռնարկություններ հիմնադրելու, վերակազմավորելու, լուծարելու հարցերը, ինչպես նաև, սույն օրենքով և ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, լուծում է այլ հարցեր:

6. Ներկայացուցիչների ընդհանուր ժողովում սպառողական ընկերությունները, անկախ փայավճարի չափից, առաջադրում են հավասար թվով ներկայացուցիչներ:

7. Ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են միության կազմի մեջ մտած բոլոր սպառողական ընկերությունների ներկայացուցիչների 50 տոկոսից ավելին: Միության գործունեությունը դադարում է ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ գաղտնի քվեարկությամբ, եթե դրա օգտին քվեարկել է միության կազմի մեջ մտած բոլոր սպառողական ընկերությունների ներկայացուցիչների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երկու երրորդը:

8. Միության գործադիր մարմինը վարչությունն է, իսկ վերահսկիչ մարմինը՝ վերստուգիչ հանձնաժողովը:

9. Միության գործունեության դադարման դեպքում հարկերը վճարելուց, պարտադիր մյուս վճարումներն իրականացնելուց, պարտատերերի հանդեպ պարտավորությունները կատարելուց, սպառողական ընկերությունների փայերը վճարելուց հետո մնացած գույքի բաշխման կամ հետագա օգտագործման կարգը որոշվում է միության կանոնադրությամբ:

Հոդված 3. Սպառողական ընկերությունների միություն

1. Սպառողական ընկերությունների միությունը (այսուհետև՝ միություն) սպառողական ընկերությունների շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կամավոր միավորում է, որը կազմավորվում է այդ ընկերությունների դրամական կամ այլ նյութական ներդրումների հիման վրա, հանդիսանում է իրավաբանական անձ, գործում է իր կանոնադրությանը համաձայն՝ սպառողական ընկերությունների կողմից իրեն տրված լիազորությունների սահմաններում:

2. Սպառողական ընկերությունն իրավունք ունի դուրս գալու միության կազմից՝ միության կանոնադրությամբ սահմանված կարգով դրամական կամ այլ նյութական արտահայտությամբ ստանալով միությանը պատկանող գույքի իր բաժինը:

3. Միությունը պատասխանատվություն չի կրում իր կազմում գտնվող սպառողական ընկերությունների պարտավորությունների համար, իսկ վերջիններս պատասխանատվություն են կրում միության պարտավորությունների համար միայն իրենց փայավճարի սահմաններում:

4. Միությունն իր անդամների, դուստր ձեռնարկությունների միջև ծագած տնտեսական վեճերը լուծելու նպատակով, իր կանոնադրությանը համապատասխան, ստեղծում է արբիտրաժային հանձնաժողով:

5. Միության կառավարման բարձրագույն մարմինը սպառողական ընկերությունների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն է, որը հաստատում է միության կանոնադրությունը, որոշում միության անդամների փայավճարի չափը, ընտրում է միության ղեկավար և վերահսկիչ մարմիններ, լսում նրանց հաշվետվությունները, սահմանում այդ մարմինների պահպանման ծախսերը, որոշում դուստր ձեռնարկություններ հիմնադրելու, վերակազմավորելու, լուծարելու հարցերը, ինչպես նաև, սույն օրենքով և միության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, լուծում է այլ հարցեր:

6. Ներկայացուցիչների ընդհանուր ժողովում սպառողական ընկերությունները, անկախ փայավճարի չափից, առաջադրում են հավասար թվով ներկայացուցիչներ:

7. Ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են միության կազմի մեջ մտած բոլոր սպառողական ընկերությունների ներկայացուցիչների 50 տոկոսից ավելին:

Միության գործունեությունը դադարում է ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ գաղտնի քվեարկությամբ, եթե դրա օգտին քվեարկել է միության կազմի մեջ մտած բոլոր սպառողական ընկերությունների ներկայացուցիչների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երկու երրորդը:

8. Միության գործադիր մարմինը վարչությունն է, իսկ վերահսկիչ մարմինը՝ վերստուգիչ հանձնաժողովը: Միության

վարչության և վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է միության կանոնադրությամբ:

9. Միության գործունեության դադարման դեպքում հարկերը վճարելուց, պարտադիր մյուս վճարումներն իրականացնելուց, պարտատերերի հանդեպ պարտավորությունները կատարելուց, սպառողական ընկերությունների փայերը վճարելուց հետո մնացած գույքի բաշխման կամ հետագա օգտագործման կարգը որոշվում է միության կանոնադրությամբ:

Հոդված 4. Սպառողական ընկերությունների, միությունների ու պետական իշխանության և կառավարման մարմինների փոխհարաբերությունները

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է սպառողական ընկերությունների, միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը: Պետությունն աջակցում է սպառողական ընկերությունների, միությունների զարգացմանը և տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանը:

2. Սպառողական ընկերությունները և միությունները իրենց կանոնադրական գործունեության մեջ անկախ են պետական իշխանության և պետական մարմիններից, հասարակական, հասարակական-քաղաքական և այլ կազմակերպություններից:

Արգելվում է սպառողական ընկերությունների, միությունների գործունեությանը պետական իշխանության և կառավարման մարմինների միջամտությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Պետական իշխանության և կառավարման մարմինների անօրինական միջամտության հետևանքով սպառողական ընկերություններին, միություններին հասցված նյութական վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Պետական իշխանության և կառավարման մարմինները սպառողական ընկերությունների, միությունների պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում այդ մարմինների պարտավորությունների համար:

Հոդված 5. Սպառողական ընկերությունների, միությունների պետական գրանցումը

1. Սպառողական ընկերությունները և միությունները համարվում են հիմնադրված և ձեռք են բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պետական գրանցման օրվանից:

2. Սպառողական ընկերությունների, միությունների պետական գրանցման համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ դիմում, փայատերերի (ներկայացուցիչների) հիմնադիր ժողովի որոշմամբ հաստատված կանոնադրությունը և հիմնադիր ժողովի արձանագրությունը:

3. Պետական գրանցման մասին որոշումն ընդունվում է վերոհիշյալ փաստաթղթերի հանձնման օրվանից երեսուն օրվա ընթացքում: Սպառողական ընկերությունները, միություններն իրենց գրանցման կամ գրանցման մերժման մասին պետք է տեղեկացվեն գրանցման (գրանցման մերժման) մասին որոշում ընդունելու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում:

Գրանցման մասին որոշման ընդունումը կարող է հետաձգվել կամ գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է ընդունվել միայն այն դեպքում, երբ սպառողական ընկերությունների, միությունների հիմնադիր փաստաթղթերը հակասում են սույն օրենքի պահանջներին:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետներում գրանցման մասին որոշում չստանալու կամ մերժման մասին որոշում ստանալու դեպքում սպառողական ընկերության, միության անդամներն իրավունք ունեն դատական կարգով գանգատարկելու պետական գրանցող մարմնի գործողությունը:

Հոդված 6. Սպառողական ընկերությունների, միությունների գույքը և դրա իրավական պաշտպանությունը

1. Սպառողական ընկերության գույքը պատկանում է փայատերերին՝ կոլեկտիվ սեփականության իրավունքով:

2. Սպառողական ընկերությունների միության գույքը կոլեկտիվ սեփականության իրավունքով պատկանում է նրա կազմի մեջ մտած սպառողական ընկերություններին:

3. Սպառողական ընկերությունների և միությունների գույքը գոյանում է փայավճարներից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

4. Սպառողական ընկերությունների, միությունների գույքն անձեռնմխելի է և պաշտպանվում է պետության կողմից:

5. Սպառողական ընկերությունների, միությունների գույքը կարող է օտարվել միայն փայատերերի (լիազորների), ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ գաղտնի քվեարկությամբ, եթե այդ որոշման օգտին քվեարկել է փայատերերի (լիազորների) ներկայացուցիչների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երկու երրորդը, ինչպես նաև

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Հոդված 7. Սպառողական ընկերությունների, միությունների ձեռնարկատիրական գործունեության հիմունքները

1. Սպառողական ընկերությունները, միություններն իրենց տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերը մշակում են ինքնուրույն:
2. Սպառողական ընկերությունները, միություններն իրենց կանոնադրական խնդիրների իրականացման համար կարող են, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հիմնադրել դուստր ձեռնարկություններ:
3. Սպառողական ընկերությունները, միություններն իրենց կանոնադրական խնդիրներն իրականացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են ստեղծել ուսումնական, գիտահետազոտական հաստատություններ, առևտրային բանկեր, ֆինանսավարկային հաստատություններ և այլ ձեռնարկություններ ու կազմակերպություններ կամ մասնակցել դրանց:

Հոդված 8. Սպառողական ընկերությունների, միությունների եկամուտները և դրանց հարկումը

1. Սպառողական ընկերությունների և միությունների եկամուտները կազմավորվում են փայավճարներից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, պետական օժանդակությունից, բարեգործական մուտքերից, արժեթղթերի վաճառքից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից:
2. Սպառողական ընկերությունների, միությունների եկամուտների հարկումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Աշխատանքային հարաբերությունները սպառողական ընկերություններում, միություններում

1. Սպառողական ընկերություններում, միություններում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, սույն օրենքով և սպառողական ընկերությունների, միությունների կանոնադրություններով:
2. Սպառողական ընկերությունները, միություններն իրենց կանոնադրական խնդիրներն իրականացնելու նպատակով կարող են, օրենսդրությամբ սահմանված կարգով, աշխատանքային պայմանագրով ներգրավել վարձու աշխատողներ, ինքնուրույն որոշել աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և աշխատանքային մասնակցությունը, աշխատանքի կազմակերպման ձևերը և վճարման չափը և այլն:
3. Միության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվում են միության կանոնադրությամբ սահմանված կարգով:
4. Սպառողական ընկերություններում, միություններում ընտրովի պաշտոնները զբաղեցնող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են սպառողական ընկերությունների, միությունների կանոնադրություններով: Ընտրովի պաշտոն զբաղեցնող աշխատողներին վարչական տույժի ենթարկելու, ինչպես նաև զբաղեցրած պաշտոնից ազատելու հարցերը լուծում է նրանց ընտրող մարմինը:

Հոդված 10. Սպառողական ընկերությունների, միությունների արտաքին տնտեսական գործունեությունը

1. Սպառողական ընկերությունները, միությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են իրականացնել արտաքին տնտեսական գործունեություն՝ կապեր հաստատելով օտարերկրյա ձեռնարկությունների, կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ:
2. Սպառողական ընկերությունները, միություններն իրենց գործունեության մեջ միաժամանակ ղեկավարվում են Միջազգային Կոոպերատիվ Ալյանսի կանոնադրությամբ սահմանված կոոպերատիվ շարժման հիմնական սկզբունքներով:
3. Սպառողական ընկերությունների, միությունների արտաքին տնտեսական գործունեությունից ստացված արտարժույթը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հարկերը վճարելուց և պարտադիր մյուս վճարումներն իրականացնելուց հետո մնում է սպառողական ընկերությունների, դրանց միությունների տնօրինության տակ և օգտագործվում վերջիններիս կանոնադրություններով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Լ. Տեր-Պետրոսյան

30 դեկտեմբերի 1993 թվականի,
քաղ. Երևան
ՀՕ-91